ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ

ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ (ՓԻԼԻՍՈՓԱՅԱՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Զաքարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սարգսյան
պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Հ. Աբրահամյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. հունիսի 26-ին՝ ժամը 13:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. մայիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ փ.գ.թ., դոցենտ Գ.Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Համաշխարհայնացման պայմաններում ազգային ինքնության հիմնահարցը շարունակում է մնալ արդիական, քանզի աշխարհում տեղի ունեցող փոփոխություններն անընդհատ վերագծում են «համաշխարհային» և «ազգային» իրականության սահմանները, վերափոխում աշխարհի պատկերը՝ առաջադրելով անհատական ու ազգային ինքնության կառուցարկման և ազգային կյանքի կազմակերպման նոր չափորոշիչներ: Եթե նախորդ դարաշրջաններում ինքնության հարացույցները փոփոխվում էին դանդաղ, ապա արդի ժամանակներում այդ փոփոխությունները տեղի են ունենում արագորեն՝ օրակարգային դարձնելով այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են՝ ո՞վ է անհատը, ի՞նչ մշակույթի է պատկանում, ազգային ի՞նչ հոգեկերտվածքի, լեզվի, պատմական անցյալի և կրոնի կրող է, ինչպիսի՞ ինքնութենական հատկությունների հիման վրա է կազմավորում այնպիսի խմբային «Մենք», որը տարբերվում է «Նրանք»-ից՝ «Ուրիշ»-ից: Ինքնության հարցը ինքնանույնականության կռվաններ փնտրող անհատի համար վեր է հառնում որպես ազգային մարդու և համաշխարհային քաղաքացու կերպարների միջև ընտրության երկընտրանք: Անհատն ինքն է ընտրում սոցիոմշակութային այն դիմակը, որն առավել է արտահայտում իր գոյության կերպը: Եթե նախկինում էթնիկ ինքնությունը որոշակիորեն սահմանում էր մարդու տեղն ու դերը համաշխարհային իրականության մեջ, ապա ներկայիս հասարակության համար առաջնային է դառնում անհատի քաղաքացիությունը: Բացի դրանից՝ անհատի սոցիալական ինքնությունը կառուցվում է նաև համացանցային փոխհարաբերությունների դաշտում և ձևավորում այնպիսի ինքնություն, որը կարելի է անվանել «վիրտուալ ինքնություն»: Այս իմաստով ազգային ինքնության հիմքերը դառնում են էլ ավելի երերուն՝ անհրաժեշտություն առաջացնելով պատշաճ ուշադրություն դարձնել ազգային ինքնության տարրերին՝ հոգեկերտվածքին, կրոնին, լեզվին, մշակույթին և պատմական անցյալին, դրանք վերաիմաստավորել և դարձնել «գրավիչ», որպեսզի այդ հիմքով մշակվեն ազգային նույնականությունն ապահովող ադյունավետ մեխանիզմներ: Ազգային ինքնության արդիականացման հարցը ենթադրում է ոչ միայն անցյալի մշակութային իրողությունների և ինքնության պատմական շերտերի իմաստավորում, այլև ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան արդիականացում: Բնականաբար, հնարավոր չէ ներկայում ապրել անցյալով, սակայն կարևոր է անցյալը մեկնաբանել և վերաիմաստավորել ներկայի լույսի ներքո: Ազգային մարդու նկարագրից չօտարանալու, այլ ազգերին չձուլվելու պատճառներից զատ՝ կարևոր է նաև հաշվի առնել ինքնության արդիականացման ներքին հիմքերը, որոնք սերտորեն առնչվում են և՛ նույնականության մեխանիզմների մշակմանը, և՛ նոր ու հին արժեքների համապատասխանեցմանը, և՛ ազգային այնպիսի կյանքի կազմակերպմանը, որը հիմնվում է անցյալի թերությունների և առավելությունների ճանաչողության վրա: Այս

տեսանկյունից արժեքավոր է հայի ինքնության պատմության յուրաքանչյուր փուլի՝ հատկապես հայոց համար բեկումնային ու պատմական իրադարձություններով հարուստ Լուսավորականության դարաշրջանի մտածողների հայացքների ուսումնասիրությունը: Կրելով եվրոպական Լուսավորականության ազդեցությունը՝ հայ լուսավորական շարժումը հանդես եկավ հայոց իրականությունը լուսավորական գաղափարներով վերափոխելու և ազգային կյանքը կազմակերպելու մշակութային նոր սկզբունքներով: Ազգային մարդու նոր նկարագիրը, նույնականության լուսավորական մեխանիզմները, լուսավորական գաղափարներով ազգային ինքնության հիմնական տարրերի պահպանումն ու արդիականացումը դարձան հիմք հայոց ինքնության լուսավորական նախագծի համար:

Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը: Ատենախոսության մեջ ինքնության հիմնախնդրի վերաբերյալ հրապարակի վրա գտնվող փիլիսոփայական գրականությունը պայմանականորեն բաժանվում է երկու խմբի՝ ա/ ուսումնասիրություններ, որոնք նվիրված են Լուսավորական դարաշրջանի հայ փիլիսոփայական մտքի ընդհանուր պատկերի, առանձին փուլերի, ուղղությունների, հեղինակների և հիմնահարցերի վերլուծությանը **(Էդ. Շ. Հարությունյան, Ա. Սարգսյան, Ս. Սարգսյան, Ա. Թևոսյան, Ռ. Միրումյան, Հր. Շաքարյան և այլք)** և բ/ ուսումնասիրություններ, որոնց առարկան հայկական ինքնությունն է՝ ի մասնավորի ազգային ինքնության վերաբերյալ տարբեր դարերի, այդ թվում Լուսավորական դարաշրջանի մտածողների ըմբռնումները **(Հ. Միրզոյան, Ա. Սարգսյան, Ս. Սարգսյան, Էդ. Ա. Հարությունյան, Ս. Շաքարյան և այլք):** Վերոնշյալ հետազոտություններն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով առնչվում են հայոց ինքնությանը, տեսական, մեթոդաբանական ու փաստական հիմք ստեղծում հայոց ինքնության լուսավորական նախագծի ուսումնասիրության համար: Ըստ արժանվույն գնահատելով հետազոտողների կատարած աշխատանքը՝ հարկ է նշել, որ դրանք նպատակ չունեին ամբողջական ձևով լուսաբանել և գնահատել ազգային ինքնության մասին հայ լուսավորականների հայացքները, ցույց տալ հայոց ինքնության կրոնական ու լուսավորական հարացույցների ընդհանրություններն ու տարբերությունները, ազգային ինքնության տեսանկյունից դիտարկել ժամանակաշրջանի տեսական, պատմամշակութային և ազգային իրողությունները:

Սույն աշխատանքի **հետազոտության օբյեկտը** հայոց ինքնությունն է, **առարկան՝** հայոց ինքնության լուսավորական նախագծի վերլուծությունն ու առանձնահատկությունների վերհանումը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հայոց ինքնության լուսավորական նախագծի ուսումնասիրության նպատակն է հետազոտել ազգային ինքնության հարցը հայ լուսավորական մտքի համատեքստում, ցույց տալ նախորդ դարերում և Լուսավորական դարաշրջանում կառուցարկված հայոց ինքնության հարացույցների ընդհանրություններն ու տարբերությունները, վեր հանել XIX դարում հայոց

ինքնության արդիականացման հիմնական պատճառներն ու միտումները: Այդ նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ խնդիրները՝

- Վեր են հանվել պատմական ու սոցիոմշակութային այն պայմանները, որոնք նպաստել են հայոց ինքնության հիմնահարցի քննարկմանը,
- ցույց են տրվել ժամանակաշրջանի հայ փիլիսոփայական մտքի առնչությունները եվրոպական լուսավորականության հետ,
- հետազոտվել է ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքն ազգային ինքնության տեսանկյունից, վեր են հանվել ինքնության կրոնական և լուսավորական հարացույցների տարբերությունները,
- ներկայացվել են հայ լուսավորականների տեսակետները հայոց նկարագրի ու հոգեկերտվածքի առավելությունների ու թերությունների պատճառների, ինքնաճանաչողության ձևերի մասին,
- ցույց են տրվել պատմական անցյալի վերաիմաստավորման լուսավորական մտածողների մոտեցումների յուրահատկությունները,
- լուսաբանվել են քննարկվող ժամանակաշրջանի մտածողների հայացքները կրոնի, դավանանքի և լեզվի վերաբերյալ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտական խնդիրները լուծելու համար կիրառվել են վերլուծության, համանմանության, համակարգման, տարբերությունների և նմանությունների զուգորդման, պատմական նյութի վերակազմության, պատմահամեմատական, ինքնության ուսումնասիրության պրիմորդիալիստական և կոնստրուկտիվիստական գիտական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը: Մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ համակարգված ձևով վերլուծելով և գնահատելով Լուսավորականության դարաշրջանի հայ մտածողների հայացքները հայոց ինքնության վերաբերյալ, շրջանառելով նոր նյութեր և մեթոդաբանական նոր տեսանկյունից վերիմաստավորելով հայտնի աղբյուրները՝ ատենախոսությունում առաջադրվել և հիմնավորվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները՝

- Հենվելով մասնագիտական գրականության մեջ առկա հայ Լուսավորականության դարաշրջանի փիլիսոփայական ուղղությունների դասակարգման վրա և այն մասամբ ձևափոխելով ու հիմք ընդունելով ազգային ինքնության նկատմամբ դրանց վերաբերմունքը՝

պայմանականորեն առանձնացվել է երեք ուղղություն՝ բուն լուսավորական, կրոնական (պահպանողական) և լուսավորական-պահպանողական:

- Ի տարբերություն ազգային ինքնության կրոնական հարացույցի՝ լուսավորական նախագծում առաջնային են դառնում ազգի, հայրենիքի, քաղաքացու, աշխարհիկ կառույցների, կյանքի տարբեր ոլորտներում աշխարհիկ ոգու հաստատման, պատմական անցյալի, լեզվի ու գրի փոփոխության, կրոնական համայնքից քաղաքական ազգի վերածվելու և ազգային արժեքները վերաիմաստավորելու ու վերագնահատելու գաղափարները:

- Հայոց ինքնության լուսավորական նախագծում առանձնացվում են ինքնաճանաչողության երկու ձև՝ ա/ ինքնահայեցողության միջոցով սեփական հոգեկերտվածքի, վարքաձևերի ու արժեքների նկատմամբ վերաբերմունքի ձևերի վերլուծություն և բ/ ինքնաճանաչողություն՝ դրկից ազգերի ինքնութենական գծերի համեմատության միջոցով:

- Պատմական անցյալի վերակազմության լուսավորական մոտեցման մեջ տարբերակվում է երկու մոտեցում՝ ա/ **պատմագիտական,** որի խնդիրը հայոց պատմության համակարգված շարադրանքն է և քաղաքակրթության պատմության մեջ հայոց տեղի ու դերի պարզումը, բ/ **փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական)**, որի նպատակն է գեղարվեստական պատկերների, ավանդազրույցների, պատմական դեպքերի ընտրության ու պատմական միֆերի արարման ճանապարհով հավաքական հիշողության մեջ վերակենդանացնել անցյալի փառավոր էջերը, ազգակիցներին ծանոթացնել անցյալում ստեղծված քաղաքակրթական արժեքներին, ստեղծել ազգային հերոսներ ու հակահերոսներ՝ դրանով իսկ առաջադրելով ազգային իդեալի տեսլականը:

- Կրոնի, դավանանքի ու հոգևորականության դերի հարցում հակադրվելով կրոնական ինքնության կողմնակիցներին՝ լուսավորականները կարծում էին, որ ա/ կրթությունը պետք է լինի աշխարհիկ, բ/ կրոնը և դավանանքը չպետք է նույնացվեն ազգության հետ, գ/ միաժամանակ, հաշվի առնելով կրոնի ու եկեղեցու դերը հայոց մեջ, դրանք չպետք է առհասարակ դուրս թողնել ինքնության կառուցվածքից:

- Եթե լեզվի հարցում հայոց ինքնության կրոնական հարացույցի կողմնակիցները միանշանակ նախապատվություն տալիս էին գրաբարին, ապա լուսավորականների բանակում առանձնանում է երկու թև՝ **արմատական**, որի կողմնակիցները պահանջում էին գրաբարը հանել գործածությունից և համապատասխանեցնել գրավոր ու բանավոր լեզուները, և **չափավոր**, որի կողմնակիցները հանդես էին գալիս այդ երկուսը

համադրելու և միասնական լեզու ստեղծելու պահանջով: Այս երկու մոտեցումներից արմատական մոտեցումը դարձավ գերակա և լուծեց գրաբարից աշխարհաբարին անցնելու խնդիրը:

Պաշտպանության ներկայացված դրույթները:

- Հայ լուսավորականությունը, հարազատ մնալով եվրոպական լուսավորականության հիմնական սկզբունքներին, էական դեր ու նշանակություն է տալիս հայրենիքին ու ազգին վերաբերող հարցերին, միաժամանակ փիլիսոփայական հիմնական «ներուժը» ծառայեցնում հայոց ինքնության հիմնահարցերի արդիականացմանը, ազգային ինքնագիտակցության վերափոխմանն ու ազգային առաջընթացին:

- Հայոց ինքնության լուսավորական նախագծում էական ու կարևոր դեր ունի ազգային նկարագրի ճանաչողության հարցը: Այն մի կողմից հենվում է «Ես»-«Ես» ճանաչողական սկզբունքի վրա, մյուս կողմից ինքնաճանաչողության մեջ էական է համարում այլաճանաչողությունը, երբ «Ես»-ը ճանաչվում է Ուրիշների՝ ինքնութենական գծերի հետ համեմատելու միջոցով: Այս մոտեցումները թույլ են տալիս ստեղծել ազգային նկարագրի ամբողջական պատկեր, որում արտացոլված են ազգային հոգեկերտվածքի թե՛ դրական և թե՛ բացասական գծերն ու հատկությունները: Ինքնաճանաչողության նման մոտեցումները հիմք են հանդիսանում «վերագրվող» ու «ապրվող» ինքնությունները միմյանցից տարբերակելու և «վերագրվող» ինքնությունից «ապրվող» ինքնությունը զտելու համար:

- Եթե ինքնաճանաչողության առաջին փուլում հայ լուսավորականների խնդիրն էր ազգային նկարագիրը ճանաչել, որոշակիացնել դրական ու բացասական գծերը, վեր հանել դրանք դետերմինացնող կապերն ու հարաբերությունները, ապա ինքնաճանաչողության երկրորդ փուլը պատմական անցյալի վերաիմաստավորումն ու լուսավորական աշխարհաճանաչողության միջոցով վերագնահատումն է: Պատմական անցյալի նման վերաիմաստավորումն ընթանում է երկու մոտեցումով՝ **պատմագիտական ու փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական)**: **Պատմագիտական** մոտեցումը հաստատում է այն, որ հայի հոգեկերտվածքն իր սաղմնավորման ու զարգացման ընթացքով չնչին փոփոխության է ենթարկվել, իսկ **փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական)** մոտեցումը ձգտում է որոշակիացնել հայոց տեղն ու դերը համամարդկային մշակույթի մեջ, հայի գիտակցության մեջ վերաիմաստավորել սեփական պատմության գոյության կերպը:

- Ի տարբերություն նախորդ դարաշրջանների՝ Լուսավորականության ժամանակաշրջանում փոփոխություններ են տեղի ունենում հայոց ինքնության կառուցվածքում, քանի որ վերաիմաստավորվում ու վերափոխվում են ազգային ինքնության կառուցման կարևորագույն գործիքները՝ կրոնը և լեզուն: Եթե եվրոպական Լուսավորականության մեջ դավանանքը էական դեր չուներ, ապա հայ Լուսավորականության մեջ «կրոն», «հավատ», «եկեղեցի» հասկացությունների հետ մեկտեղ կարևոր նշանակություն էր տրվում «դավանանք» հասկացությանը: Եվրոպական Լուսավորականության օրինակով լուծելով կրոնի, հավատի ու եկեղեցու հարցը՝ դավանանքի գնահատման հարցում հայ լուսավորականները հայտնվում են երկընտրանքի առջև: Մի կողմից նրանք չեն ցանկանում ազգությունը որոշել դավանանքով, մյուս կողմից պետականության բացակայության պայմաններում կարևորում են ինքնության մեջ դավանանքի պահպանական գործառույթը:

- Լեզվի հիմնահարցը, որպես գրավոր ու բանավոր լեզուների համապատասխանեցման խնդիր, լուսավորական նախագծում ունի առանցքային նշանակություն: Այն դիտվում է որպես ազգային իդեալների ստեղծման, ազգային ոգու ու ազգային գիտակցության վերափոխման հիմնական «գործիք»: Ի տարբերություն եվրոպական Լուսավորականության՝ հայ Լուսավորականության մեջ լեզվի դերը վճռորոշ է, իսկ լեզվական փոխակերպումները՝ արդարացված:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ առաջադրված հարցադրումները, դրանց լուծումները և կատարված եզրահանգումները հետազոտությունն օգտակար են դարձնում հետևյալ առումներով՝

- հայոց ինքնության վերաբերյալ հետազոտությունները լրացվում են նոր հարցադրումներով և առաջ են քաշվում դրանց լուծման նոր մոտեցումներ,

- հետազոտությունը կարելի է օգտագործել հիմնախնդրի՝ փիլիսոփայական, մշակութաբանական, քաղաքագիտական և հայագիտական ուսումնասիրություններում,

- առաջ քաշվող դրույթներն ու կատարված տեսական ընդհանրացումները կիրառելի են այժմյան ազգային իրականությունը հասկանալու և մեկնելու տեսանկյունից,

- հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հայ փիլիսոփայության, մշակութաբանության, պատմության և հայագիտության դասընթացների առարկաների ծրագրերում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության պատմության ամբիոնի 2018 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում, իսկ 2019 թ.-ի մարտի 29-ի փիլիսոփայության պատմության, տեսական փիլիսոփայության և տրամաբանության միավորված ամբիոնի նիստում երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են.

- Ս. Պետերբուրգում կայացած «Հայոց ինքնության գրական հուշակոթողներ» խորագրով գիտաժողովում (11.09.2013-14.09.2013)
- ԵՊՀ-ում կայացած «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուն» ֆակուլտետի 50 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (10.01.2014-13.02.2014)
- ԵՊՀ ՈՒԳԸ տարեկան նստաշրջանում (ապրիլ 27-30, 2015)
- ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի սեմինար քննարկումներում և ամբիոնի՝ համապատասխան դասընթացներում (2013-2018)
- հեղինակի գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երկու ենթագլխից) եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը 148 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել գիտական մշակվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, նշվել հետազոտության օբյեկտն ու առարկան, մեթոդաբանական սկզբունքները և առաջադրվել են գիտական նորույթ պարունակող դրույթներ:

Առաջին գլուխը՝ **«Հայոց ինքնության լուսավորական նախագծի ձևավորման պատմամշակութային նախադրյալները»** նվիրված է հայոց ինքնության լուսավորական նախագծի ստեղծման պատմամշակութային նախադրյալների վերլուծությանը: Այս գլխում ներկայացվել են հայ և եվրոպական լուսավորական փիլիսոփայությունները, վերլուծվել է ինքնության (նույնականության) այն ճգնաժամը, որը հիմք դարձավ հայոց ինքնության վերաիմաստավորման համար, առանձնացվել են ինքնության լուսավորական նախագծի հիմքերն ու տեսլականները: Արձանագրվել է, որ հայ և եվրոպական լուսավորականության միջև թեև կան աղերսներ, սակայն հայ Լուսավորականությունը տարբերվում է եվրոպական Լուսավորականությունից ազգային հարցերին առացքային դեր ու նշանակություն տալով: Ուսումնասիրելով քննարկվող ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը՝ արվել է այն եզրահանգումը, որ ազգային ինքնության հարցը հայ լուսավորական փիլիսոփայության մեջ ստանում է ընդգծված ազգային երանգ, իսկ հայոց ինքնության լուսավորական նախագիծը կառուցվում է՝ հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի սոցիոմշակութային համատեքստը:

Առաջին՝ «Ի՞նչ է Լուսավորականությունը. լուսավորականությունը հայ իրականության մեջ» ենթագլխում Լուսավորականությունը գնահատվել է որպես գաղափարախոսություն, շարժում և փիլիսոփայական ուղղություն, ապա քննարկվել են հայ Լուսավորականության դարաշրջանի պարբերացման հետ կապված հարցեր: Հաշվի առնելով մասնագիտական գրականության մեջ եղած տեսակետները՝ հայոց ինքնության լուսավորական նախագծի համատեքստում Լուսավորականության դարաշրջան ասելով նկատի ունենք հայոց պատմության XVIII երկրորդ կեսից սկսած մինչև XIX դարավերջը ընդգրկող ժամանակահատվածը, որը բաժանվում է երեք՝ Լուսավորականության գաղափարախոսության ձևավորման փուլի (XVIII երկրորդ կես), զարգացման ու ծաղկման փուլի (XIX 50-70-ական թվականներ) և ավարտի կամ կերպափոխության փուլի (XIX 80-90-ական թվականներ) **(Ա.Սարգսյան):** Քննարկվող ժամանակաշրջանի տեսական-փիլիսոփայական մտքի մեջ, նկատի ունենալով ինքնության նկատմամբ վերաբերմունքը, առանձնացվել են երեք ուղղություն՝ **բուն լուսավորական, լուսավորական-պահպանողական և կրոնական**: **Բուն լուսավորական** ուղղությունը, որի ներկայացուցիչներից են **Մ. Նալբանդյանը, Մ. Մամուրյանը, Ռաֆֆին,** և այլք, որոշ վերապահումներով դիտվել է որպես Լուսավորականության հիմնական սկզբունքներն ու գաղափարներն արտահայտող ուղղություն: Մյուսը **լուսավորական-պահպանողական** ուղղությունն է, որի

ներկայացուցիչներից էին **Խ. Աբովյանը, Ղ. Ալիշանը, Ս. Տյուսաբը, Ստ. Նազարյանցը** և այլք: Նրանք թեև լուսավորական գաղափարների պաշտպան էին, սակայն որոշ հարցերում հանդես էին գալիս ավանդական-պահպանողական տեսանկյունից: Կրոնական ուղղության ներկայացուցիչներից էին **Հ. Չամուռճյանը,** որոշ վերապահումով նաև՝ **Գ. Այվազովսկին** և այլք, որոնք հին ինքնության կրողն ու ջատագովն էին և հանդես էին գալիս հասարակական ու ազգային կյանքը կազմակերպելու ավանդական եղանակների դիրքերից:

Երկրորդ՝ **«Հայոց ինքնության նույնականության ճգնաժամը և լուսավորական նախագծի հիմքերն ու տեսլականները»** ենթագլխում ներկայացվել է նույնականության ճգնաժամի այն հիմքերը, որոնք դարձան պատճառ լուսավորական արժեքներով հայոց ինքնության հարացույցի ստեղծման համար: XIX դարում հայ և եվրոպական իրականության մեջ լուսավորական գաղափարների ազդեցությամբ փոխվեց ու «վերստեղծվեց» աշխարհի պատկերը: Ձևավորվեցին երկխոսման ու ճանաչողության նոր սկզբունքներ և մարդու տեղի ու դերի գնահատման լուսավորական չափանիշներ: Փոխակերպվող նման հասարակության մեջ վերակառուցվեցին նախկին կապերն ու հարաբերությունները, փոխվեցին աշխարհաճանաչողության հարացույցները՝ դառնալով նույնականության ճգնաժամի պատճառ: Այն, ինչ անցյալում համարվում էր արժեքավոր, կորցնում էր իր արժեքը: Անհատը, որ արդեն իսկ ազգային որոշակի «դիմակի»՝ ինքնության կրող էր, ապրում էր արժեքների և ինքնության երկատման սահմանային վիճակում, որը որոշ առումով անցումային փուլ էր և ենթադրում էր բախում հնի և նորի միջև: Իսկ թատրոնի, երաժշտության, նկարչության, պարբերական մամուլի և հրապարակախոսական մտքի զարթոնքով վերափոխվեց ազգային գիտակցության բովանդակությունը: Հայոց միտքը հարստացավ հերոսի և հակահերոսի, պատմական անցյալի, անհատի և հայրենիքի, հայրենասիրության ու ազգասիրության նոր պատկերացումներով, ինչն էլ հիմք հանդիսացավ հաղթահարելու ինքնության կամ նույնականության ճգնաժամը, մտածելու ազգային առաջընթացի մասին և կերտելու ինքնության նոր հարացույց:

Երկրորդ գլխում՝ **«Ինքնաճանաչողության և պատմական անցյալի իմաստավորման խնդիրը ինքնության լուսավորական նախագծում»,** լուսաբանվում են դարաշրջանի մտածողների պատկերացումներն ու մոտեցումները հայի նկարագրի, հոգեկերտվածքի ճանաչողության ձևերի և պատմական անցյալի վերաիմաստավորման յուրահատկությունների վերաբերյալ:

Առաջին՝ «Ովքե՞ր ենք մենք. ինքնաճանաչողության ձևերը» ենթագլխում քննարկվում է հայի հոգեկերտվածքի ճանաչողության հարցը: Հայոց ինքնության լուսավորական նախագծում ինքնաճանաչողության հարցն ուներ ելակետային նշանակություն. այն և՛ սեփական նկարագրի վերաիմաստավորման, և՛ սեփական պատմության արժևորման միջոց էր: Կարելի է ասել՝ ինքնության ճանաչման բանալի: Լուսավորական նախագծում ազգային նկարագրի ու հոգեկերտվածքի

ճանաչողությունը սկսվում էր հետևյալ հարցադրումներից՝ **«Ովքե՞ր ենք մենք», «Հոգեկերտվածքային ի՞նչ առանձնահատկություններ ունենք», «Որո՞նք են մեր թերություններն ու առավելությունները», «Ինչպիսի՞ն են «Մենք»-ի և «Ուրիշի» փոխհարաբերությունները և այլն:** Ճանաչողական նման ընթացքը ոչ միայն սահմանում ու պարզորոշ էր դարձնում ազգային հոգեկերտվածքը, այլև հընթացս ստեղծում էր հավաքական «Մենք»-ի այնպիսի կերպար, որը սոցիոմշակութային տեքստի փոփոխությամբ ժամանակ առ ժամանակ վերակերտվում ու վերարժևորվում էր: Դրական նույնացման պարագայում, օրինակ, ազգային «Ես»-ը կառուցվում էր՝ հիմնվելով միայն դրական հատկանիշների վրա: Այդ գործընթացն ուղեկցվում էր պատմության իդեալականացմամբ, «Ուրիշ»-ի նկատմամբ «Մենք»-ի առավելության գիտակցմամբ և էթնիկ միասնության հաստատմամբ՝ երբեմն նաև ազգի բացառիկ լինելու գաղափարի առաջադրմամբ: Բացասական նույնացման պարագայում «Մենք»-ի կերպարում տեղ էին գտնում ազգային խառնվածքի թերի կողմերը, բացասական գծերը, ինչն ուղեկցվում էր նույնականության ճգնաժամով, ազգային «Ես»-ից աստիճանաբար օտարվելու և այլ ինքնության միջոցով սեփական նույնականությունը տեսնելու ձգտմամբ:

Հայոց ինքնության լուսավորական նախագծում ինքնաճանաչողությունն ուղեկցվում էր ազգային «Ես»-ի թե՛ դրական, թե՛ բացասական կողմերի ճանաչողությամբ՝ առաջնորդվելով երկու մոտեցմամբ՝ **ինքնաճանաչողություն առանց «Ուրիշ»-ի՝ «Ես»-«Ես» փոխհարաբերության համատեքստում** (ինքնահայեցողության միջոցով սեփական հոգեկերտվածքի, վարքաձևերի ու արժեքների նկատմամբ վերաբերմունքի ձևերի վերլուծություն), ինքնաճանաչողություն այլաճանաչողության միջոցով՝ **հիմնված «Ես»-ի և «Ուրիշ»-ի փոխհարաբերության վրա (ինքնաճանաչողություն՝ դրկից ազգերի ինքնութենական գծերի համեմատության միջոցով**): Ինքնաճանաչողության առաջին ձևը, իր հերթին, ճյուղավորվում ու դրսևորվում էր երկու ձևով՝ ա/ հայի վարքաձևերի ու նկարագրի հատկապես թերի կողմերի ուսումնասիրությամբ **(Մ. Բաղրամյան),** բ/ հայի դրական հատկությունների ճանաչողությամբ. հայը ներկայանում էր որպես բարոյական նկարագիր ունեցող, դեպի կատարելությունը խոյացող, հոգևոր ինքնությամբ առաջնորդվող ազգի ներկայացուցիչ **(Խ. Աբովյան)**: Եթե ինքնաճանաչողության «Ես»-«Ես» սկզբունքը ճյուղավորվում էր գրեթե իրար հակադիր ուղղությունների, ապա այն ինքնաճանաչողությունը, որն առաջնորդվում էր այլաճանաչողությամբ, հիմնական խնդիրների շուրջ միավորվում էր՝ արձանագրելով ա/ «Ուրիշ»-ի միջոցով ազգային «Ես»-ը ճանաչելու և սահմանելու հրամայականը, քանզի «Ուրիշ»-ը դառնում էր «Ես»-ի գնահատման և արժևորման միջոց, հնարավոր դարձնում վերագրվող ինքնությունը վերածել ապրվող ինքնության **(Մ. Նալբանդյան):** Այլաբանորեն ասած՝ ինքնաճանաչողությունը դառնում էր այլոց միջոցով «Ես»-ի կերպավորման օբյեկտիվ չափանիշ՝ սահմանազատելով և անջատելով **վերագրվող ինքնությունը ապրվող ինքնությունից**: բ/ Այլաճանաչողությունը պետք է ունենար կոնկրետ տիրույթ՝ զուգադրվող և համեմատվող ինքնություններով: Վերջինիս դերում

հանդես էին գալիս թուրքերը, քրդերը, պարսիկները: Այդ համեմատության վերջնարդյունքում արձանագրվում էր, որ հայը կարիք է զգում վերահիմաստավորել իր տեղն ու դերն աշխարհում, հստակ սահմանագիծ անցկացնել հոգևոր և աշխարհիկ գոյության միջև, քանզի եթե իսլամը ռազմատենչ ու նվաճող է դարձնում, ապա քրիստոնեությունը նման ելակետեր չուներ **(Ռաֆֆի):** գ/ Հայի նկարագիրը դիտարկվում էր նաև քաղաքակրթության լույսի ներքո և գնահատվելով քաղաքակրթական չափման միջոցով՝ ձևակերպվում էր «ազգային իդեալիզմ» գաղափարը, որի ակունքը չկիրառվող հայրենասիրությունն ու ուտիլիտարիզմի բացակայությունն էր **(Գ.Արծրունի):** դ/ Հայի նկարագիրը ճանաչվում և արժևորվում էր համադրական սկզբունքի միջոցով՝ հաստատելով այն, որ հայն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական հատկություններ, որոնք ազդում են ինքնության դրսևորումների վրա: Հայի հոգեկերտվածքային հատկություններից հատկապես ուշադրության էր արժանանում այն, որ հայը չի գիտակցում՝ յուրաքանչյուրը շարժման կրող է, և ընդվզել ուրիշի միջոցով նույն է, թե չընդվզել: Բացի այդ, շարժումը անշարժության է վերածվում, երբ շարժման մասնիկներն անշարժ են: Հետևապես, կրավորական կեցվածքը պետք է փոխարինվի գործողի կեցվածքով: Վերոնշյալից զատ՝ նորովի էր գնահատվում նաև վաճառականության երևույթը՝ համարելով, որ դրա ազդեցությամբ հայի նկարագիրը այլափոխվում է, և հայը դառնում է ապահայրենասեր, անձնապաշտ ու նյութապաշտ **(Ղ. Ալիշան):**

Երկրորդ ենթագլուխը՝ «Պատմական անցյալի վերահիմաստավորման յուրահատկությունները», նվիրված է ազգային ինքնության լուսավորական նախագծում պատմական անցյալի վերահիմաստավորման հարցի լուսաբանությանը: Պատմական անցյալի վերահիմաստավորման շնորհիվ շարունակվում էր լուսավորական ինքնաճանաչողությունը՝ հիմքում ունենալով ինքնաստեղծման տարրերը և ուրվագծելով լուսավորական ինքնության հիմնական բովանդակությունը: «Ովքե՞ր ենք մենք» հարցադրման պատասխանները պետք է փնտրել ոչ միայն քաղաքակրթության համատեքստում, այլև պատմական անցյալի ճանաչողության մեջ: Այն արտահայտվում է պատմության վերահիմաստավորման միջոցով հայի տեղն ու դերը քաղաքակրթության մեջ որոշելու և, ինչու չէ, նաև հայի մասին բարձրաձայնելու մոտեցմամբ: «Ովքե՞ր ենք մենք հարցադրումը» լրացվում է նաև «Ովքե՞ր ենք մենք մարդկության պատմության մեջ» հարցադրմամբ, որի պատասխանները հայ լուսավորականները փնտրում են պատմական անցյալում՝ առաջնորդվելով պատմության իմաստավորման տարբեր մոտեցումներով: Այս հարցադրմանը պատասխանելու ընթացքում ձևավորվում է երկու մոտեցում՝ **պատմագիտական և փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական**): **Պատմագիտական** մոտեցումը, որի հիմքում ընկած էր հայոց պատմության և հայի ինքնության զուգահեռ ուսումնասիրության սկզբունքը, բացորոշում էր քրիստոնեության և հեթանոսության ազդեցությունը հայոց ինքնության վրա: Հեթանոսության ու քրիստոնեության ընկալման հայի կերպն արտացոլել է նրա ազգային նկարագրի ու հոգեկերտվածքի յուրահատկությունը: Ի մասնավորի՝

հեթանոսական աստվածները հիմնականում եղել են ոչ թե երկրային, այլ երկնային աստվածներ, ոչ թե կրակի, այլ լուսնի տեսքով **(Ղ. Ալիշան, Ստ. Պալասանյան),** ինչը վկայում է հայի աշխարհընկալման ձևի ու բովանդակության կրոնից անկախ լինելը: Պատմագիտական մոտեցումը պատմական անցյալը քննում էր պատմական իրադարձությունների շղթայական զարգացման տեսանկյունից՝ նպատակ ունենալով պատմական ու ազգային ինքնությանն աղերսվող հարցերի ու թեմաների վերարծարծմամբ արժևորել հոգևոր կյանքի իրողությունները (կրոն, լեզու, արվեստ, գիտություն), քաղաքակրթության պատմության մեջ պարզել հայոց տեղն ու դերը: Առաջադրվում էր այն տեսակետը, որ և՛ հեթանոսական, և՛ քրիստոնեական ժամանակաշրջանում եղել են հոգեկերտվածքային այնպիսի հիմնական հատկություններ, որոնք ժամանակի ընթացքում չեն բեկվել, բնորոշել են հային և այդ իսկ միջոցով պահպանել են հայի ինքնության գոյության անընդհատությունը՝ սկզբից մինչև ներկան: Դրանց զարգացումը ճնշվել է ինքնության մեջ կրոնական տարրի գերիշխանության պատճառով. արվեստը, գրականությունը եզերվել են կրոնական շրջանակում: Հետևապես պահպանելով անցյալի արժեքավոր կողմերը՝ ներկան պետք է կառուցվի հաշվի առնելով արդիականության պահանջները: Պատմագիտական մոտեցումը դարձավ այն հիմքը, որից օգտվելով էլ՝ հայ լուսավորականները լուծեցին անցյալի պատմությունը հային սիրելի, օտարների կողմից ընդունելի դարձնելու հարցերը: Նրանք առաջադրեցին մարդկության պատմության ակունքներում լինելու տեսությունը, պատմական անցյալի ուսումնասիրության հիման վրա ստեղծեցին հերոսի և հակահերոսի, հայրենասերի և ազգադավի կերպարներ: Ի տարբերություն պատմական անցյալի պատմագիտական ընկալման՝ **փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական)** մոտեցումը նշանավորվեց պատմության դրվագներն ու իրադարձություններն ընտրված նպատակներին համապատասխանեցնելու մեթոդով: Պատմական անցյալի պատմագիտական վերաիմաստավորման առաջին փուլում հայ լուսավորականները խնդիր դրեցին ստեղծել հայի համար այնպիսի պատմական անցյալ, որը կսերմանի ուժի ու հզորության գիտակցում: Փնտրելով հայի տեղը քաղաքակրթության մեջ՝ հայ լուսավորականները հատկապես սերտ կապ էին տեսնում ազգային երաժշտության և հայի ինքնության միջև՝ համարելով, որ հայի ինքնությունը պահպանել են լեզուն, կրոնը և ազգային երաժշտությունը **(Խ. Աբովյան):** Բացի այդ, փիլիսոփայական-թարգմանական գրականության առկայությունը և հնագույն լեզուներից մեկի կրողը լինելը ևս ունեցել է իր դերն ու նշանակությունը քաղաքակրթության պատմության մեջ հայոց տեղը որոշելու համար **(Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյանց)**: Եթե պատմական անցյալի փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական) ընկալման առաջին փուլը հենվեց պատմության դրվագները նպատակային առանձնացնելու և, ըստ այդմ, նույնականության տարրեր ստեղծելու վրա, ապա երկրորդ փուլում՝ գեղարվեստական գրականության մեջ, պատմական անցյալը վերաիմաստավորվում՝ առաջ քաշելով հերոսի և հակահերոսի, հայրենասերի և ազգադավի պատմական կերպարներ **(Ռաֆֆի, Մուրացան և այլք):** Պատմությունը «բերվում է» ներկա՝ ապրումակցումը դարձնելով պատմական անցյալի ընկալման հիմնական միջոց:

Երրորդ գլուխը՝ **«Կրոնի և լեզվի տեսլականը ինքնության լուսավորական նախագծում»,** նվիրված է կրոնի և լեզվի վերաիմաստավորմանը և դրանք արդիականացնելու լուսավորական ձգտումներին:

Առաջին ենթագլխում՝ «Կրոնի և դավանանքի լուսավորական ըմբռնումները», քննարկվում է հայի ինքնության մեջ կրոնի և դավանանքի սերտ կապի հարցը, վեր են հանվում այդ երկուսի փոխհարաբերության առանձնահատկությունները: Լուսավորականության մեջ կրոնի հարցը դիտարկվում է նախ դավանանքի, ապա նաև հոգևորականների տեղի և դերի հստակեցման, հայի հոգեկերտվածքի հետ առնչակցության համատեքստում: Հայ լուսավորականների կողմից կրոնի հարցի քննարկման նպատակն էր նախապատրաստել անցումը կրոնական համայնքից աշխարհիկ, լուսավորական համայնքին՝ ուղենիշ ունենալով ազգ, հայրենիք, պետություն գաղափարները: Վերջիններս կրոնական հարացույցում ոչ էական, երկրորդական դեր ունեին, իսկ լուսավորական հարացույցում՝ էական: Կրոնի դերի դիտարկման մյուս նպատակն էր սահմանազատել հոգևոր ոլորտն աշխարհիկից, կրթական գործառույթի իրականացումը հանձնել մասնագետ-մանկավարժներին և այլն: Ազգային հարցերը լուծելիս էլ առաջնորդվել ազգային շահով և ոչ կրոնական գաղափարախոսությամբ: Հայոց ինքնության լուսավորական նախագծում կրոնի հարցը դիտարկվեց ա/ **դավանաբանության ծիրում, բ/ աշխարհիկացման՝ կրոնի տեղը և դերը սահմանելիս, գ) հայի հոգեկերտվածքի, քրիստոնեության և, որոշ առումով, նաև հեթանոսության համատեքստում**: Ըստ այդմ էլ՝ հայոց ինքնության լուսավորական նախագծում ուրվագծվեցին կրոնի քննարկման տարբեր տեսանկյուններ: Դրվեց հոգևոր իշխանությունը աշխարհիկ իշխանությունից տարանջատելու հարցը: Ազգապահպանման մեջ առանցքային համարելով երկու հիմնաքար՝ հավատը և լեզուն, լուսավորական բովանդակություն տրվեց «կրոն» հասկացությանը, քանզի «հավատ» հասկացության կիրառումը հնարավորություն ընձեռեց կրոնը դիտարկել առավել լայն համատեքստում. այն մեկնել ինչպես հավատի, այնպես էլ զուտ աստվածաբանական-կրոնական վարդապետության իմաստով: Դրսևորվեց հոգևոր իշխանությունը աշխարհիկ իշխանությունից տարանջատելու մոտեցում: Կրոնի հարցում լուսավորական մոտեցումը ենթադրում էր նաև «կրոն», «հավատ», «եկեղեցի» հասկացությունները տարանջատել միմյանցից և դրանք չդիտարկել մեկ հարթությունում **(Խ. Աբովյան)**: Արդիական դարձավ այն հիմնահարցը, **թե ո՞րն է կրոնի տեղն ու դերը անհատի կյանքում:** Տարանջատելով մարմինն ու հոգին՝ ընդունելի համարվեց այն, որ մարդը միայն մարմին չէ և կազմված է աննյութ տարրից՝ հոգուց: Եվ քանի որ հոգին վերացական հասկացություն չէ, ապա պետք է ընդունել նաև, որ իրականության մեջ այն ունի գոյության իր ձևը: Այդ գոյությունն արտահայտվում է կրոնի միջոցով, որը կարելի է համարել «ներքին» և «արտաքին» մարդու փոխհարաբերության կարգավորիչ, իսկ ազգային կյանքը չի կարող լինել կրոնական **(Մ. Նալբանդյան)**: Կարևորելով հայի ինքնության որոշման ոչ կրոնական չափանիշը և «հայ լինել նշանակում է լինել առաքելական եկեղեցու հետևորդ» դրույթը համարելով աղանդավորական բնութագիր՝ այնուամենայնիվ

դավանանքի և ազգային ինքնության փոխհարաբերության հարցը մնաց առկախ: Համարվեց, որ դավանանքը որոշ առումով պահպանում է ազգային միասնության հիմքը և այն չի կարելի անտեսել **(Մ. Մամուրյան)**: Տվյալ ժամանակաշրջանում տեղ ուներ նաև կրոնական ուղղությունը, որը հանդես էր գալիս հին արժեհամակարգը պահպանելու, նորը մերժելու սկզբունքով: Կրոնական թևի ներկայացուցիչները **(Հ. Տերոյենց, Գ. Այվազովսկի)** առանցքային դեր էին տալիս դավանանքին և կարծում էին, որ կրոնական ինքնության պահպանման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև կրոնական և բարոյական գիտակցության կապով: Տարածում էր գտնում այն կարծիքը, որ կրոնական գիտակցությունը նույնական է բարոյական գիտակցությանը, իսկ վերջինս առավել է քաղաքական գիտակցությունից, քանզի մարդը նախ հոգևոր գոյ է, ապա՝ նյութական **(Մ. Աղաբեգյան):** Ձևակերպվում էր նաև այնպիսի կարևորագույն հիմնահարց, ինչպիսին է կրոնական ճանաչողության հարցը. արդյոք հայը ճանաչում է իր դավանած կրոնը: Բացասաբար պատասխանելով այս հարցին՝ հրամայական դարձավ կրոնի՝ որպես գաղափարախոսության ճանաչողության հարցը (Ստ. Նազարյանց): Արդեն XIX դարի վերջին դրվում է կրոնի և ազգային հոգեկերտվածքի փոխհարաբերության հարցը և այն քննարկվում է ինչպես քրիստոնեության համատեքստում **(Ռաֆֆի)**, այնպես էլ հեթանոսության **(Կ. Կոստանեանց)**: Երկուսի պարագայում էլ փորձ էր կատարվում ազգային խառնվածքի որոշ հատկությունների առկայությունը բացատրել կրոնի ազդեցությամբ:

Երկրորդ՝ «Լեզվի արդիականացման խնդիրը» ենթագլխում լուսաբանվում է լեզվի շուրջ կրոնական և լուսավորական ինքնության կողմնակիցների միջև տեղի ունեցած բանավեճը: Լեզվի հիմնահարցը հայոց ինքնության լուսավորական նախագծում էական ու առանցքային դեր ուներ, քանզի ամենից առաջ այն լուսավորական գաղափարախոսության «մունետիկն» էր: Հայ լուսավորականները ձգտում էին փոխել ազգային-լեզվական իրականությունը, որպեսզի դրա միջոցով փոփոխություններ կատարեին նաև հայի գիտակցության, մտածողության և աշխարհայացքի մեջ: Լեզուն ոչ թե ինքնաբավ մեծություն էր, այլ մտածելակերպ, գործելակերպ և գոյելակերպ **(Է. Աթայան)**, և լեզվական համակարգում կատարվող փոփոխություններն անմիջականորեն ազդելու էին վերոնշյալների վրա. փոխելու էին ազգային իրականությունը:

Լեզվի հիմնահարցը քննարկելիս լուսավորականները, հիմնականում համերաշխ էին այն բանում, որ գրաբարից պետք է անցնել աշխարհաբարի, սակայն նրանց հայացքներն իրարից տարբերվում էին այդ անցման ձևի հարցում: Եթե լեզվի հարցում հայոց ինքնության կրոնական հարացույցի կողմնակիցները միանշանակ նախապատվություն տալիս էին գրաբարին, ապա լուսավորականների բանակում առանձնանում է երկու թև՝ չափավոր և արմատական: Չափավոր մոտեցման կողմնակիցները ոչ թե դեմ էին գրաբարից աշխարհաբարին անցնելուն և չէին տեսնում դրա անհրաժեշտությունը, այլ ձգտում էին գտնել միջին լուծում: Վերջինս արտահայտվում էր գրաբարն ու աշխարհաբարը հաշտեցնելու, դրանց միջև երկխոսության եզրեր թողնելու և մեկը մյուսից չանջատելու, լեզվական անջրպետ

չստեղծելու ցանկությամբ **(Ս. Տյուսաբ):** Արմատական մոտեցման ներկայացուցիչների համար աշխարհաբար լեզվին անցումը անհրաժեշտություն էր և այն հավասարազոր էր ինքնության պահպանմանը: Նրանց կարծիքով՝ հայի իդեալները օտարածին էին, քանզի գրաբարը անմատչելի էր, իսկ հասանելի գրականությունը՝ հիմնականում թուրքերեն կամ ռուսերեն **(Խ. Աբովյան):** Գրաբարը թեև չքնաղ էր ու գեղեցիկ, բայց չուներ կիրառելիություն, իսկ այն, ինչը կիրառելի չէ, պետք է մնա անցյալում **(Մ. Նալբանդյան):** Նրանց կարծիքով՝ նոր սերնդի ազգասիրական ու հայրենասիրական դաստիարակության համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի գրականություն, որը լինի ազգային ու հանրամատչելի: Մյուս կողմից լուսավորականները ձգտում էին նաև քողազերծել լեզվի անփոփոխության մասին առասպելը՝ համարելով, որ շարժունությունը բոլոր լեզուների բնութագիրն է, և հայոց լեզուն այդ առումով բացառություն չէ. աստվածային լեզվի կամ լեզվական սրբացման միտումները մերժելի են առաջադեմ ազգերի համար **(Ստ. Նազարյանց)**: Չնայած միջոցների և ընկալումների տարբերություններին՝ գրաբարից աշխարհաբարին անցնելու պահանջը իրագործվեց կյանքում:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները և կատարված ընդհանրությունների հիման վրա առաջ քաշվում հետևյալ դրույթները.

- Եվրոպական լուսավորականությունը, բազմաճյուղ լինելով հանդերձ, հիմնական հարցերի շուրջ միավորվում էր համերաշխորեն և ստեղծում էր աշխարհի մեկ՝ լուսավորական պատկերը: Այն հայ լուսավորականության կողմից ոչ թե ընդօրինակվեց կամ հանդես եկավ հայելային պարզ անդրադարձմամբ, այլ շարունակեց իր զարգացումը՝ որպես լուսավորականության մեկ ընդհանրական երևույթի ճյուղ: Հայ լուսավորականությունը հանդես եկավ որպես եվրոպական լուսավորական մտքի դրսևորումներից մեկը և ոչ թե պարզ պատճենումը, քանզի լուսավորական մարդակենտրոնությունը, քաղաքացի ձևավորելու նախաձեռնողականությունը, ազատության, ընտրության հարցերը հայ լուսավորական մտքում սաղմնավորվեցին, և, ապա, կերպավորվեցին ազգային աշխարհաճանաչողության, իմաստասիրման համատեքստում: Եվ բացի այն, որ հայ լուսավորական փիլիսոփայությունը հարաբերականորեն ինքնուրույն էր, այն նաև տարբերվեց կրոնի, լեզվի, պատմական անցյալի, անհատի և ազգի փոխհարաբերության իմաստավորման ձևերով: Եթե եվրոպական լուսավորականության առանցքը բանականությունն էր, ապա հայ լուսավորականությունը բնութագրվում էր և՛ բանապաշտությամբ, և՛ ազգային հարցերին «հուզական կապվածությամբ»:

- Հայոց ինքնության լուսավորական նախագծում ազգային նկարագիրը ճանաչվեց երկու ձևով՝ ինքնաճանաչողություն ազգի ներսում և

ինքնաճանաչողություն՝ հենված այլաճանաչողության վրա. «Մենք»-ի ստեղծում և «Մենք»-ի հակադրում «Ուրիշ»-ին: Ազգային «Մենք»-ի վերաստեղծումը, նույնականացման մեխանիզմների մշակումը ազգային նկարագիրը ճանաչելի դարձրին տարբեր տեսանկյուններից: Հայը բնութագրվեց և՛ դրական, և՛ բացասական հատկությունների միջոցով: Թեև հայը անձնապաշտ է, բայց և ունի բարոյական վեհ գիտակցություն: Պատմության ընթացքում հայը չի առաջնորդվել այլ ազգերի ինքնությունը ճանաչելու նախաձեռնողականությամբ և այդ իսկ պատճառով միակողմանիորեն է սահմանել իր ինքնությունը:

- Պատմական անցյալի հարցը հայ լուսավորականության մեջ վերաիմաստավորվեց՝ հիմնվելով պատմագիտական և փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական) ըմբռնումների վրա: Պատմագիտական մոտեցումը ձգտում էր վեր հանել փաստագրական հիմնական տվյալները, իսկ փիլիսոփայական (հրապարակախոսական-գեղարվեստական) մոտեցումը հայեցողաբար էր վերաբերում պատմական փաստերին, ստեղծում պատմական առասպելներ, հերոսի և հակահեռոսի կերպար:

- Հայոց ինքնության հոլովույթում պատմական անցյալը դիտարկվեց որպես ազգային ինքնության վերաձևակերպման ու վերափոխման «բանալի»: Կարելի է ասել, որ պատմական անցյալի հետ միաժամանակ առաջադրվեց «պատմական մոռացության» գաղափարը, որն արատահայտվեց պատմությունը զտելու միտումով: Վերջինիս նպատակն էր ստեղծել նույնականության նոր մոդելներ՝ հերոսի և հակահերոսի, յուրայինի և օտարի լուսավորական կերպարներ: Եթե պատմագիտական մոտեցումը շեշտում էր պատմական անցյալի անընդհատությունը, սրբագրում և նոր ժամանակներին համապատասխանեցնում այն՝ լուծելով պատմական անցյալի միջոցով ինքնաճանաչողության հարցը, ապա փիլիսոփայական մոտեցումն այդ ինքնաճանաչողությունը ուղղորդեց այնպես, որ նպաստեր ազգասիրության գաղափարի ամրապնդմանը ու ազգային առաջընթացին:

- XIX դարի հայ լուսավորականության կողմից կրոնի տեղի և դերի վերաիմաստավորման նպատակը պայմանավորված էր նախ հայ հասարակության աշխարհիկացմամբ, ապա՝ կրոնական հարացույցը լուսավորական հարացույցով փոխակերպելու անհրաժեշտությամբ: Այս նպատակն ի կատար ածելու համար առաջ քաշվեց ազգությունն ըստ կրոնի և դավանանքի չսահմանելու, կրոն, հավատ, եկեղեցի հասկացութային տարբերությունը և ոչ նույնությունը շեշտելու, կրոնի էության և դրա սոցիալական գործառույթների հարցերը պարզորոշ դարձնելու դրույթներով: Կրոնի տեղի և դերի նման վերաիմաստավորման արդյունքում դրվեցին

կրոնական ազատականության հիմքերը, ինչը նպաստեց կաթոլիկության, հեթանոսական կրոնի և աթեիստական գաղափարների տարածմանը: Դրանք սպառնալիք էին և՛ ազգային նկարագրի վրա բացասական ազդեցություն ունենալու, և՛ ազգային միասնությունը խարխլելու առումով: Ուստի, կրոնական հարացույցը լայն իմաստով չփոխակերպվեց լուսավորական հարացույցի, և կրոնը շարունակեց իրականացնել ինքնութենապահպան իր գործառույթը:

- Հայոց ինքնության լուսավորական նախագծում լեզվական փոխակերպումները լիովին կիրառվեցին, իսկ լեզվի վերաբերյալ XIX դարի հայ լուսավորականության հայեցակետերը միավորվեցին «լեզվական նիհիլիզմի» շուրջ՝ գրաբարի ժխտում և աշխարհաբարի հաստատում: Լեզուն դիտվեց ա/ իբրև հայի ոգու ազատ տեղաշարժման «գործիք» բ/ ազգային իդեալի, գաղափարի ձևավորման միջոց, որը կատարում է իմացաբանական, կրթական, հերմենևտիկական գործառույթներ և այլն: Լեզվական փոխակերպման շնորհիվ լուսավորական գաղափարները տարածվեցին հասարակության լայն շերտերի շրջանում և նպաստեցին նույնականացման նոր մոդելների ստեղծմանը՝ հերոսի, ազգային իդեալի գաղափարի սաղմնավորմանը: Այս իմաստով լեզուն ունեցավ գործնական ազդեցություն նաև հոգեկերտվածքի և պատմական անցյալի վերաձևակերպման ու արդիականացման հարցում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1.Հայի հոգեկերտվածքի ճանաչողության լուսավորական հարացույց. Ինքնաճանաչողությունը իբրև ինքնության կառուցման նախապայման, «Վէմ» համահայկական հանդես, Ժ (ԺԶ) տարի, թիվ 3 (63), «Վէմ հանդէս» ՍՊԸ, հուլիս-սեպտեմբեր, 2018, էջ 152-172:

2.Կրոնական ինքնության փոխակերպման լուսավորական հարացույցը, Հայ փիլիսոփայությունը ազգային ինքնության հարացույցների կառուցարկման ու արդիականացման համատեքստում, «Հայոց ինքնության հարցեր», պրակ 4, «ԵՊՀ» հրատ., Եր., 2017, էջ 159-189:

3.Լեզվի հիմնահարցը հայկական ինքնության արդիականացման լուսավորական նախագծում, «Կանթեղ». Գիտական հոդվածների ժողովածու, 1(70), «Ասողիկ» հրատ., Եր., 2017, էջ 176-183:

4.Морально-этический анализ армянского геноцида в контексте армянской идентичности, Международная конференция по арменоведению, “Письменные памятники армянского наследия”, изд. СПУ, Санкт-Петербург, 2017, էջ 230-236:

5.Հայի Ինքնութեան Դիտարկումը Յակոբ Օշականի Մնացորդաց Վէպում, «Հայկազեան Հայագիտական հանդէս», Հատոր ԼԶ, HAIGAZIAN UNIVERSITY PRESS, Պէյրութ, 2016,էջ 457-479:

6.Հոգու և ոգու երկընտրանքը հայկական ինքնության լուսավորական և մեհենական ծրագրերում, ԵՊՀ ՈՒԳԸ հոդվածների ժողովածու 1.6 (16), «ԵՊՀ» հրատ., Եր., 2016, էջ 104-108:

7.The Analysis of Armenian and Turkish Identity in the Context of Genocide, Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները, Գիտաժողովի նյութեր,Ապրիլ 17, «ԵՊՀ» հրատ., Եր., 2015, էջ 47-53:

8.Հայկական ինքնության կրոնական և լուսավորական նախագծերը 19-րդ դարի հայ հասարակագիտական մտքում, «ԵՊՀ» ՈՒԳԸ հոդվածների ժողովածու 3(3), «ԵՊՀ» հրատ., Եր., 2014,էջ 111-116:

НАНЕ МОВСИСЯН САМВЕЛОВНА

ПРОСВЕЩЕНСКИЙ ПРОЕКТ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ФИЛОСОФСКО-ИСТОРИЧЕСКИЙ АНАЛИЗ)

Диссертация на соискание учёной степени кандидата философских наук по специальности 09.00.01 “Философия”

Защита состоится 26 июня 2019г. в 13:00 часов на заседании Специализированного совета Философии и социологии 013 ВАК в Ереванском государственном университете,

по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а.

РЕЗЮМЕ

В нашем динамично развивающемся мире вопрос о национальной идентичности остается одним из главных вопросов современности. Причиной этого является то, что постоянные изменения, происходящие в процессе глобализации, трансформируют всемирные национальные реалии и меняют общую картину мира, предлагая новые определения для организации национальной жизни и для идентификации индивидуума и нации. Если в прошлых веках парадигмы менялись медленно, то в современности они меняются быстро, делая мир более подверженным различного родам трансформациям. В этом контексте актуализации ценным является изучение каждого этапа истории армянского народа, особенно изучение эпохи Просвещения, которая богата историческими и переломными для этого народа событиями. В результате этого изучения были сделаны следующие выводы:

Опираясь на существующие классификации направлений в Армянском Просвищении и принимая их за основу, нами условно было выделено три направления: просветительское, религиозное (консервативное) и просветительско-консервативное. В отличие от религиозной парадигмы, в Просветительском проекте первичным становятся идеи народа, родины, гражданина, мирских строений, утверждения мирского духа в разных областях жизни, идеи исторического прошлого, изменения языка и письменности, превращения религиозного общества в светское, идеи переосмысления национальных ценностей.

В Просветительском проекте армянской идентичности были выделены две точки зрения самопознания: а) анализ духовного уклада, поведения и ценностей, б) сравнение своеобразных черт соседних народов.

В просветительском подходе реконструирования исторического прошлого было выделено два уровня: а) историографический, задача которого - системное

изложение армянской истории и выяснение места и значения армян в истории цивилизации, б) философский (публицистический-художественный), цель которого воскресить славные страницы прошлого путем сотворения художественных образов, легенд, исторических мифов, познакомить свой народ со созданными в прошлом цивилизационные ценности, создание образов национальных героев и их антиподов, тем самым решая вопрос национального идеала.

В отличие от европейского просвещения, в Армянском Просвещении, наряду с понятиями “религия”, “церковь”, “вера”, рассматривается также понятие “вероисповедание”. Просветители считают, что а) образование должно быть мирским, б) религия и вероисповедание не должны идентифицироваться с нацией, в) одновременно, учитывая роль религии и церкви у армянского народа, надо сохранить их. Что касается языка, если сторонники армянской религиозной парадигмы давали предпочтение грабару (древнеармянский), то у просветителей выделяются два крыла: а) радикальный, сторонники которого требовали не применять грабар и привести в соответсвие устные и письменные языки, б) консервативный, сторонники которого выступали с требованием сопоставить их и создать единый язык. Из этих двух подходов радикальный подход решает задачу перехода грабара (древнеармянский) в ашхарабар (современный армянский язык).

NANE MOVSISYAN SAMVEL
THE ENLIGHTMENT PROJECT OF THE ARMENIAN IDENTITY

(PHILOSOPHO- HISTORICAL ANALYSIS)

Thesis for Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences under the specialty 09.00.01- "Philosophy "
The defense will take place on the 26 nd June 2019 at 13:00, at the meeting of the Specialized Council of Philosophy and Sociology 013 of the Supreme Certifying Committee,
acting at the Yerevan State University.
Address: Yerevan, 0025, 52a Abovyan str., YSU.

SUMMARY

The question of national identity continues to be a topic of constant discussions nowadays in our era of globalization, as the overall changes in the world reshape the borders of "universal" and "national" reality. The world picture is being changed, suggesting new measurements for the creation of individual and national identity and for the organization of national life. In this context of modernization, it is important to study every single phase of the history of the Armenian identity, especially the century of Enlightenment that was full of dramatic historical events for the Armenian nation.

The study of the subject led to the following findings based on the classification of the philosophical directions of Enlightenment found in the scientific literature and the impact they had on the national identity. There have been separated three directions: the Enlightenment, religious (conservative) and Enlightenment-conservative.

Contrary to the paradigm of the religious national identity, the primary importance for the Enlightenment project have the ideas of reconsideration and reassessment of nation, motherland, citizen, secular institutions, the establishment of secular spirit in different spheres of life, historical past, transformations in both spoken and written languages, conversion from a religious community to a nation and other national values. We have pointed out two views of self-recognition in the Enlightenment project of the Armenian identity: a) the analysis of the treatments towards one's own mentality, behavior and other values, b) comparison of identity features of neighboring nations.

The reshaping of the historical past within the frames of Enlightenment has two levels: a) historical, which aims at the systematic narration of the Armenian history and defining the place and role of Armenia in the history of civilization, b) philosophical (rhetorical – fictional), which aims at reconstructing the glorious pages of the past in the collective

memory and introducing the ancient civilizational values to the nation by creating heroes and their antipodes and answering the question of a national ideal. This aim could be reached by creating fictional images, legends, historical events and myths

Contrary to the European Enlightenment, the Armenian Enlightenment discussed the ideas of religion, church, faith equally, but more than that, the notion of "dogma" had the central role in it. The Enlighteners, being against the proponents of religious identity within the frames of religion, belief and spirituality, think that: a) the education must be secular, b) the religion and the belief must not be identified with the nation, c) simultaneously, taking into account the role of the religion and the church for Armenia, they should be included in the composition of identity.

Concerning the language, if the proponents of the religious paradigm of the Armenian identity preferred the Armenian Grabar language (old Armenian), the army of Enlighteners was divided into two wings: a) radical, who demanded to eliminate the usage of Grabar and to synchronize the written and spoken languages, b) conservative, who proposed the idea of merging those two languages and creating one common language. However, the radical approach became dominant and triggered the transfer from Grabar to Ashxarhabar (Modern Armenian).